# ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1], 77[2], և 77[3] հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

**որոշում եմ՝**

1. Առաջարկել մարզի Ծաղկաշեն համայնքի ղեկավարին՝

1) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերը (որոշումներ, կարգադրություններ) համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին.
2) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներին համապատասխան սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել լիազորված պետական մարմին՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման.
3) մշակել, հաստատել և պետական գրանցում իրականացնելուց հետո սահմանված ժամկետում գործողության մեջ դնել առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները.
4) նոր խմբագրությամբ մշակել, հաստատել և գործողության մեջ դնել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը.
5) աշխատանքներ տանել արոտավարձերի նախորդ տարիների ապառքների հավաքագրման ուղղությամբ.
6) հաշվապահական հաշվառումն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, մասնավորապես սկզբնական փաստաթղթերում առկա տեղեկությունները հաշվառել հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում, կազմել շրջանառության տեղեկագրեր և վարել գլխավոր գիրքը.
7) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հուլիսի 25-ը:

2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝